ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԿՄԱՄ 5-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցումով <<Աբովյանի N5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ -ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

08/01/2018թ.

ժամը 09:55

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Գրիգորյան, Ա.Մելիքսեթյան

Քարտուղար՝ Ս.Աղաջանյանը

Պատվիրատուն՝ Աբովյանի N5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սևանի փողոց թիվ 2/4/4հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄԱՄ 5-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով Աբովյանի N5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. **«ԿՄԱՄ 5-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի հայտերի բացման մասին**

Մ. Գուլոյան

1.1 Հայտերը բացվել են 2018 թվականի հունվարի 8-ին, ժամը 09:55-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. **Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի մասին**

Մ. Գուլոյան

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի			
Հ/հ	Անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը	Հասցեն
1	Սաղաթել Մխիթարյան ԱՁ	kotayqbread@gmail.com	ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան 1փ. Տուն 12
2	Գալիմա ՍՊԸ	galima7777@mail.ru	Ք.Երևան, Մամիկոնյան 8ա, բն4
3	ՎԻՊ Ֆուդ ՍՊԸ	vipfoodllc@gmail.com	Ք.Աբովյան, Սևանի 2
4	Մխիթար Ենգիբարյան Մուշեղի ԱՁ	avt2207@mail.ru	ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան, 10փ, տուն 6
5	Հելթի Ֆուդ ՍՊԸ	healthyfood2013@mail.ru	Ք.Եղվարդ, Երևանյան 2
6	Դեագա ՍՊԸ	deaga2015@mail.ru	Ք. Երևան Էրեբունի 34շ 62բն
7	Ման Եղբայրներ ՍՊԸ	man.holding@yahoo.com	ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Նոր Գեղի
8	Բիզնես Թրենդ ՍՊԸ	businesstrend@mail.ru	Ք. Երևան Բաբաջանյան 95շ 11բն

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կամ անհամապատասխան կազմված լինելու մասին

Մ. Գուլոյան

3.1 <<Սաղաթել Մխիթարյան ԱՁ>> - ի, <<ՎԻՊ Ֆուդ>> ՍՊԸ-ի և Մխիթար Ենգիբարյան Մուշեղի ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 <<Գալիմա>>ՍՊԸ-ի, <<Հելթի Ֆուդ>> ՍՊԸ-ի, <<Դեագա>> ՍՊԸ-ի , << Բիզնես Թրենդ >> ՍՊԸ-ի ծրարները կազմվել են ՀՀ գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերին և հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ մասնավորապես, <<Դեագա>> ՍՊԸ-ի , << Բիզնես Թրենդ>> ՍՊԸ-ի ծրարների վրա չկան մասնակիցների ստորագրությունները, <<Հելթի Ֆուդ>> ՍՊԸ-ի ծրարի վրա սխալ է գրված մրցույթի ծածկագիրը և <<Գալիմա>>ՍՊԸ-ի ծրարի վրա բացակայում է «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը:

3.3 << Ման Եղբայրներ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացած ներկայացուցչի լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթի տվյալները չեն համապատասխանում միմյանց:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Մ. Գուլոյան

4.1. Մերժել <<Գալիմա>>ՍՊԸ-ի, <<Հելթի Ֆուդ>> ՍՊԸ-ի հայտերը ՀՀ Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի և <<Դեազա>> ՍՊԸ-ի , << Բիզնես Թրենդ >> ՍՊԸ-ի հայտերը ՀՀ Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները չբավարարելու հիմքերով պայմանավորված

4.2.Մերժել <<Ման Եղբայրներ >> ՍՊԸ-ի հայտը լիազորություն չունեցող անձի միջոցով հայտը ներկայացնելու հիմքով պայմանավորված

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը և ժամը որոշելու մասին

Մ. Գուլոյան

5.1 Հայտերում առկա փաստաթղթերի հրավերի պահանջներին համապատասխան լինելու , յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի, առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա հունվարի 10-ին ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Գուլոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ.Գրիգորյան

_____ Ա.Մելիքսեթյան

Քարտուղար _____Ս.Աղաջանյան